Հավելված N 1.1
«ՀՀ ՊՆ-ԳՀ ԱՊՁԲ-21-3/2»* ծածկագրով
ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ հրավերի

# *ՆԿԱՐԱԳԻՐ*

## *առաջարկվող ապրանքի ամբողջական*

Շուշան Տեխնիկս ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ-ԳՀ ԱՊՁԲ-21-3/2»* ծածկագրով գնանշման հարցման շրջանակում ըստ չափաբաժինների ստորև ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը |
|---|---|
| *9* | Պատկերով ասեղնագործված պանո, վերևում ուղղանկյուն նաձև է, ներքևում նման է կիսաշրջանաձև վահանի, շրջանակը փայտանյութից, լաքապատ՝ լայնությունը 37,5սմ, բարձրությունը 45սմ /+-1սմ/: Շրջանակի հաստությունը՝ 3,5սմ /+-0,5սմ/: Ասեղնագործությունը՝ գունավոր թելերով: «ՀԱՅԱՍՏԱՆ» բառը ասեղնագործված է արծաթագույն տառերով, կապույտ ֆոնի վրա, 1 տառի բարձրությունը՝ 3,5սմ, գծի հաստությունը 1սմ /+-0,2սմ/, «ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ» բառակապակցությունը ասեղնագործված է կապույտ գույնով, 1 տառի բարձրությունը 2,3սմ /+-0,2սմ/, գծի հաստությունը 0,5սմ /+-0,1սմ/: Ետևի մասը փակված է կոշտ թղթով և ամրացված է կախիչ: Յուրաքանչյուր տուփում մեկ հատ ՀՀ ԶՈՒ զինանշան: Զինանշանը առանց կողմնակի հետքերի, ասեղնագործած պատկերը հստակ, առանց ելուստների: |
| *13* | Կոմպլեկտը պետք է լինի՝ բացված վիճակում՝ 60սմx60սմx3սմ: Նարդին պետք է պատրաստված լինի հաճարի կամ կաղնե լիովին չորացված փայտից, հարթեցված, հղկված և լաքապատված: Նարդու դիմերեսին՝ փորագրված հայկական խորհրդանիշներ, իսկ հետնամասում շաշկու խաղատախտ, որի դիմային մակերեսին պետք է հստակ տպագրված լինեն 32 բաց և 32 մուգ խաղավանդակներ, տեղադրված ըստ սահմանված կարգի, որոնց էսքիզը նախապես համաձայնեցվում է պատվիրատուի հետ: Խաղատախտերի վրա պետք է սահմանված կարգով տեղադրված և հարմարեցված լինեն երկուական մետաղական ծղնիներ և փականներ: Փայտե խաղաքարեր՝ 16 մուգ և 16 բաց՝ տրամագիծը 3սմ, բարձրությունը 1սմ և 2 հատ զառ: Յուրաքանչյուր հուշանվեր պետք է ունենա սև կամ մուգ շագանակագույն բրեզենտե կտորից բռնակներով պայուսակ, որի մուտքը փակվում է շղթայով: |
| *15* | Ժամացույցը պատրաստված է հաճարի կամ կաղնե չորացված փայտից մեկ կտորից /ամբողջական/՝ տրամագիծը 30սմ, հաստությունը՝ 3սմ, լաքապատված և առանց վնասվածքների՝ հետնամասում պատին կախելու հարմարանքով: Ժամացույցի մեխանիզմը՝ դիզայնին համահունչ մետաղյա ցուցիչներով, փորագրված եզրագծով՝ արաբական թվերով /նիշերով/, թվանշանները մետաղյա: Հուշանվերը փաթեթավորված համապատասխան ստվարաթղթե տուփի մեջ, տուփի վրա պատկերված հուշանվերի նկարը: Կոմպլեկտում մեկ հատ մարտկոց: |

Շուշան Տեխնիկս ՍՊԸ –ի տնօրեն՝ Կ.Բաղրամյան --------------

Digitally signed by KARAPETYAN VERA 6302810655
Date: 2021.04.13 16:56:15 GMT+04:00